ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
МЕРЦАВАНСКИЙ МУНИЦИПАЛИТЕТ

Հայաստանի Հանրապետության Արմավիր
մարզի Մերձավանի գյուղական համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց N1,հեռախոս
(0231) 6-00-25 ,էլ. փոստ gyuxmerdzavan @ mail.ru.

04.12.2012թ.
թիվ 206

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. Ս.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ի կատարումն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $77^{1}$-րդ հոդվածի առաջին մասի, Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ղեկավարի 2012թվականի նոյեմբեր ամսվա ընդունած որոշումները և արձակած կարգադրությունները :

Առդիր 15 /տասնհինգ/ թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 10834-12
«05» 12 2012

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,Երևանյան
խճուղի 2-րդ փողոց1,հեռախոս ( 0231)6-00-25
էլ.փոստ gyuxmerdzavan@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

12 նոյեմբերի 2012թվականի N32

## ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով , Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքում 2012թվականի նոյեմբերի 12-ին կայացած աճուրդային կարգով հողի վաճառքի արդյունքներն,որոշում եմ՝.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքում 2012թվականի նոյեմբերի 12-ին կայացած Երկրագործների փողոցի թիվ 6/11հասցեում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների 1,0825հա խառը կառուցապատման հողամասի աճուրդային կարգով վաճառքի արդյունքները:

2.Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների 1,0825հա խառը կառուցապատման հողամասի /լոտ1, ծածկագիր 04-065-0514-0031/ աճուրդային վաճառքի արդյունքում հաղթող ճանաչված Ալեքսանդր Նորիկի Կազումյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2012 թվականի նոյեմբերի 12

գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,Երևանյան
խճուղի 2-րդ փողոց1,հեռախոս ( 0231)6-00-25
էլ.փոստ gyuxmerdzavan@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

14 նոյեմբերի 2012թվականի N33-Ն

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԻ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թվականի սեպտեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման կարգը հաստատելու մասին» N1066-Ն որոշմամբ հաստատված կարգի N1 հավելվածի 7-րդ կետը, որոշում եմ.

1.Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.12533հա այլ հողատեսքի գործառնական նշանակությունը փոխել վարելահողի:

2.Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի մարզային ստորաբաժանմանը՝ կատարելու փոփոխություն սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2012 թվականի նոյեմբերի 14
գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,Երևանյան
խճուղի 2-րդ փողոց1,հեռախոս ( 0231)6-00-25
էլ.փոստ gyuxmerdzavan@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

15 նոյեմբերի 2012թվականի N34

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵԻ ՈՐՈՇՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 17-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ավագանու 2012թվականի հունիսի 6-ին N4 նիստի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի՝ /բնակավայրի / պարզեցված գլխավոր հատակագիծը հաստատելու մասին » N02-Ն որոշումն, որոշում եմ.

1.Համայնքային սեփականության բնակավայրերի, բնակելի կառուցապատման 0,0532հա հողամասին տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, գյուղ Մերձավան Երկրագործների փողոց N 15/1:

2.Սույն որոշման 1/մեկ/ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի մարզային ստորաբաժանում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2012 թվականի նոյեմբերի 15
գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,Երևանյան
խճուղի 2-րդ փողոց1,հեռախոս ( 0231)6-00-25
էլ.փոստ gyuxmerdzavan@mail.ru.

# ՈՐՈՇՈՒՄ

15 նոյեմբերի 2012թվականի N 35

## «ՄԵՐՁԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ ՏՆՕՐԵՆ ՎՈԼՈԴՅԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՀԵՏ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 17-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2012թվականի հոկեմբերի 8-ի N10 նիստի N3 որոշման N2 կետը, որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի «Մերձավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ տնօրեն Վոլոդյա Մարտիրոսյանի հետ, օրենքով սահմանված կարգով, 2012թվականի նոյեմբերի 15-ից կնքել պատուհանների նվիրատվության պայմանագիր:

2.Հանձնարարել գյուղապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետին՝ ձևակերպել հաշվապահորեն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2012թվական նոյեմբերի 15

գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,Երևանյան
խճուղի 2-րդ փողոց1,հեռախոս ( 0231)6-00-25
էլ.փոստ gyuxmerdzavan@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

22 նոյեմբերի 2012թվականի N36-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N 1328-Ն որոշմամբ, հաշվի առնելով,որ հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին,2-րդ,3-րդ ենթակետերով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ սույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում: Բնակելի տունը և շենք-շինությունները բավարարում են «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 2-րդ և 3-րդ հոդվածների պահանջները: Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, իրականացվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի բնակչուհի Անյա Արմենակի Գասպարյանի /ծնված 05.08. 1948թ./ դիմումը՝ Երիտասարդության փողոցի թիվ 3 հասցեում գտնվող, 19.11.2012թվականին /սեղանամատյան 6187/ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի հիման վրա, իրեն սեփականության իրավունքով պատկանող, օրինական տնամերձ հողամասի վրա ինքնական կառուցված բնակելի տունը և բնակելի նշանակության շենք-շինությունները օրինականացնելու մասին , որը

օրենքի ուժով կարող է փոխանցվել իրեն՝ անհատույց սեփականության իրավունքով , որոշում եմ.

1.Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի Երիտասարդության փողոցի թիվ3 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Անյա Արմենակի Գասպարյանի /ծնված 05.08. 1948թ./ գույքային միավորները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքն օրինական 0,0406հա մակերեսով հողամասի վրա գտնվող, մինչև 2001թվականի մայիսի 15-ը կառուցված, բնակելի տան և շենք-շինությունների նկատմամբ:

2.Բնակելի տան և շենք- շինությունների մակերեսները, կառուցման տարեթվերը ենթակա է ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

3.Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի մարզային ստորաբաժանմանը գրանցելու քաղաքացի Անյա Արմենակի Գասպարյանի /ծնված 05.08. 1948թ./ սեփականության իրավունքը՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինական հողամասի վրա ինքնական կառուցված բնակելի տան և շենք-շինությունների նկատմամբ, տրամադրելով անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2012թվական նոյեմբերի 22

գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,Երևանյան
խճուղի 2-րդ փողոց1,հեռախոս ( 0231)6-00-25
էլ.փոստ gyuxmerdzavan@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

23 նոյեմբերի 2012թվականի N37-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ և 21-րդ կետերով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ավագանու 2011թվականի նոյեմբերի 24-ի N13 հերթական նիստի N07-Ն որոշման N4 կետը, որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ավագանու 2012թվականի նոյեմբերի 12-ի N1 հերթական նիստի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի 2011թվականի նոյեմբերի 24-ի N13 նիստի N07-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N5-Ն որոշմամբ նախատեսված և հաստատված հոդվածներում կատարել հետևյալ վերաբաշխումը.

1) 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4222 հոդվածով նախատեսված 1 000 000ՀՀ դրամը ուղղել 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4239 հոդվածին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2012թվական նոյեմբերի 23

գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,Երևանյան
խճուղի 2-րդ փողոց1,հեռախոս ( 0231)6-00-25
էլ.փոստ gyuxmerdzavan@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

12 նոյեմբերի 2012թվականի N38

## ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով , Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքում 2012թվականի նոյեմբերի 30-ին կայացած աճուրդային կարգով հողի վաճառքի արդյունքերն,որոշում եմ՝.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքում 2012թվականի նոյեմբերի 30-ին կայացած գյուղատնտեսական նշանակության վարելահողի 0,12533հա հողամասի աճուրդային կարգով վաճառքի արդյունքները:

2.Գյուղատնտեսական նշանակության վարելահողի 0,12533հա հողամասի /լոտ1, ծածկագիր 04-065-0503-0179/ աճուրդային վաճառքի արդյունքում հաղթող ճանաչված «Պոլիմեր տրոււբ» ՍՊԸ՝ ի դեմս հիմնադիր Արթին Կարդանյանի կողմից լիազորված անձ՝«Պոլիմեր տրոււբ» ՍՊԸ տնօրեն Սուրեն Կարդանյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2012 թվականի նոյեմբերի 30
գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց 1
հեռախոս (0231)6-00-25,էլ. փոստ
gyuxmerdzavan@mail.ru.

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

12 նոյեմբերի 2012 թվականի թիվ 10

## 2012 ԹՎԱԿԱՆԻՆ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, 46-րդ հոդվածի 3-րդ մասով,կարգադրում եմ.

1.Կատարել հիմնական ֆոնդերի ապրանքանյութական արժեքների գույքագրում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղապետարանում , նրա ենթակայության «Կրթություն և մշակույթ» միացյալ տնօրինությունում և «Մերձավանի մանկապարտեզ» ՀՈԱԿ՝ 2012 թվականի նոյեմբերի 12-ի դրությամբ:

2.Ստեղծել գույքագրող ժամանակավոր հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

3. Հանձնարարել հանձնաժողովի նախագահ Ա.Եսայանին՝

ա) գույքագրման աշխատանքները սկսել 2012 թվականի նոյեմբերի 12-ին և ավարտել 2012 թվականի դեկտեմբերի 20-ին.

բ) ապահովել նյութական պատասխանատուների անմիջական մասնակցությունը գույքագրման աշխատանքներին.

գ) փաստացի գույքագրումը, ակտի ձևով, ներկայացնել համայնքի ավագանու հաստատմանը:

4.Հանձնարարել գյուղապետարանի աշխատակազմի համապատասխան աշխատակցին՝ փաստացի գույքագրման արդյունքները, ըստ նյութական պատասխանատուների, ձևակերպել հաշվապահորեն:

5.Սույն կարգադրությունն ուժի մեջ է արձակման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2012թվականի նոյեմբերի 12

գ. Մերձավան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մերձավանի
գյուղական համայնքի ղեկավարի
2012 թվականի նոյեմբերի
12-ի N 10 կարգադրության

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ, ՆՐԱ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ» ՄԻԱՑՅԱԼ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ «ՄԵՐՁԱՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ ԱՊՐԱՆՔԱՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հանձնաժողովի նախագահ-Ա.Եսայան՝ համայնքի ղեկավարի տեղակալ.

Հանձնաժողովի անդամ - Հ.Գևորգյան՝ գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար.

Հանձնաժողովի անդամ - Վ.Խուրշուդյան՝ «Կրթություն և մշակույթի» մ/տ տնօրեն.

Հանձնաժողովի անդամ - Ս.Սրապյան՝ գրադարանի վարիչ.

Հանձնաժողովի անդամ - Գ. Սարգսյան՝ «Մերձավանի մանկապարտեզ» ՀՈԱԿ տնօրեն:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,Երևանյան
խճուղի 2-րդ փողոց1,հեռախոս ( 0231)6-00-25
էլ.փոստ gyuxmerdzavan@mail.ru

### ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

24նոյեմբերի 2012թվականի N14-Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին մասով,հիմք ընդունելով 2012 թվականի նոյեմբերի 15-ին «Հայաստանի Համայնքների Միություն» իրավաբանական անձանց միությունից ստացված ԵՆ - 1511/1446 գրությունը, կարգադրում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ղեկավար Լևոն Գրիգորյանին 2012 թվականի դեկտեմբերի 11-ից մինչև դեկտեմբերի 17-ը ներառյալ, գործուղել Գերմանիայի հանրապետություն՝ «Գյուղական համայնքների տնտեսական զարգացում» ծրագրի շրջանակներում, Բավարիայի երկրամասի համայնքներում ճանաչողական այցին մասնակցելու համար:

2. Օրենքով սահմանված կարգով վճարել գործուղման ծախսերը:

3. Լևոն Գրիգորյանի գործուղման ժամանակահատվածում՝ նրա լիազորությունների իրականացումը վերապահել համայնքի ղեկավարի տեղակալ Արևհատ Եսայանին:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2012թվականի նոյեմբերի 24

գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,Երևանյան
խճուղի 2-րդ փողոց1,հեռախոս ( 0231)6-00-25
էլ.փոստ gyuxmerdzavan@mail.ru

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

12նոյեմբերի 2012թվականի N11-Ա

## ԸՆՏՐՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության N19 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012 թվականի սեպտեմբերի 14-ի «Համայնքի ղեկավար ընտրվելու մասին» N145-Ա որոշումը, կարգադրում եմ.

1. 2012 թվականի սեպտեմբերի 9-ի Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ղեկավար ընտրված Լևոն Պայքարի Գրիգորյանի լիազորությունները ստանձնելու օր համարել 2012 թվականի նոյեմբերի 12-ը:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
2012թվականի նոյեմբերի 12
գ. Մերձավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,Երևանյան
խճուղի 2-րդ փողոց1,հեռախոս ( 0231)6-00-25
էլ.փոստ gyuxmerdzavan@mail.ru

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

12նոյեմբերի 2012թվականի N12-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐԵՎՀԱՏ ԵՍԱՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՅՐ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, 28-րդ հոդվածի 3-րդ մասով,կարգադրում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ղեկավարի տեղակալ Արևհատ Եսայանի լիազորությունները վայր դնել 2012թվականի նոյեմբերի 12-ին /որպես հայեցողական պաշտոն զբաղեցնող/:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2012թվականի նոյեմբերի 12

գ. Մերձավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,Երևանյան
խճուղի 2-րդ փողոց1,հեռախոս ( 0231)6-00-25
էլ.փոստ gyuxmerdzavan@mail.ru

### ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

12նոյեմբերի 2012թվականի N13-Ա

### ԱՐԵՎՀԱՏ ԵՍԱՅԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, 28-րդ հոդվածի 3-րդ մասով,կարգադրում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ղեկավարի տեղակալ նշանակել Արևհատ Եսայանին 2012թվականի նոյեմբերի 12-ին /որպես հայեցողական պաշտոն զբաղեցնող/:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2012թվականի նոյեմբերի 12
գ. Մերձավան